

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>4.16 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ և ՀՈՂԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ.....</b>	<b>4.16.2</b>
4.16.1 Հողի տիրապետում.....	4.16.2
4.16.2 Հողի դասակարգում.....	4.16.5
4.16.3 Գյուղական հողերի օգտագործում.....	4.16.10

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 4.16.1. Հողի կարգավիճակը.....	4.16.3
Աղյուսակ 4.16.2. Հողի կատեգորիա .....	4.16.5
Աղյուսակ 4.16.3. Հողի կատեգորիա (կլորացրած մինչև 5 հա) .....	4.16.6
Աղյուսակ 4.16.4. Վարչական հողերում պետության կողմից սահմանված գյուղատնտեսական հողերի դասակարգումը.....	4.16.7
Աղյուսակ 4.16.5. Վարչական հողերում պետության կողմից սահմանված գյուղատնտեսական հողերի դասակարգումը.....	4.16.7

## ՆԿԱՐՆԵՐ

Նկ. 4.16.1. Պետական հողերի վերաբերյալ որոշումների կայացման ստորակարգը.....	4.16.2
Նկ. 4.16.2. Հողօգտագործումը ուսումնասիրվող տարածքում .....	4.16-9
Նկ. 4.16.3. Մնկերի և խոտաբույսերի հավաքման վայրեր .....	4.16-12

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 4.16.1. Սեզոնային հովիվների ամբողջական մարդահամար (2012թ.)

#### 4.16 Հողօգտագործում և հողի տիրապետում


Ծրագրի տարածքում հիմնական հողատեսքերը մշտական լեռնային արոտավայրերն են կամ տափաստանային խոտհարքները, որոնք օգտագործվում են ամառային լայնածավալ արածեցման համար: Հողերը հիմնականում մանրահատիկ և սնուցիչներով աղքատ հողեր են, իսկ վեգետացիոն շրջանը բավականին կարճ է: Խոտհարքները ապահովում են կարևոր ռեսուրսներ ամառային արոտավայրերում անասունների՝ ոչխարների, այծերի և ձիերի արածեցման համար, թողնելով ավելի ցածր բարձրությունների խոտհարքները, որպեսզի դրանք օգտագործվեն որպես կերի աղբյուր ձմռանը: Որպես կանոն, խոտհարքները կրկին օգտագործվում են որպես արոտավայրեր ուշ ամռանը և աշնանը, երբ կատարվում է բերքահավաք:

##### 4.16.1 Հողի տիրապետում

Հայաստանում գոյություն ունի հողի 4 կատեգորիա՝

- **Համայնքային հողեր** – Համայնքին պատկանող և նրա կողմից կառավարվող հող, որի համար նա ունի բոլոր լիազորությունները և իր հայեցողությամբ կարող է հանձնել վարձակալության,

**Պետական հողեր** - Հող, որը պատկանում է պետությանը, որն ունի վարչական իրավունք այն վարձակալության հանձնել համայնքին: Համայնքային հողերի վարձակալության հարցերը որոշվում համայնքի վարչակազմի շրջանակներում: Պետական հողերի վերաբերյալ որոշումների կայացման համար գոյություն ունի խիստ հիերարխիալ ընթացակարգ, ինչպես ցույց է տրված Նկար 4.16.1-ում:



#### Նկ. 4.16.1. Պետական հողերի վերաբերյալ որոշումների կայացման ստորակարգը

- **Սեփականության իրավունքով պատկանող հողեր** – հող, որը կարող է պատկանել կամ ձեռք բերվել անհատի կամ իրավաբանական անձի կողմից

- **Բնակելի/ռեզիդենտի հողեր** – հող, որը կարող է պատկանել միայն անհատի, այլ ոչ ընկերության կամ այլ իրավաբանական անձի: Անհատը կարող է օգտագործել այս հողը հողօգտագործման և կատեգորիայի այն սահմաններում, որ կատեգորիայի տակ հողը գնվել է:

Նախքան անկախությունը, գրեթե ամբողջ հողը հանդիսանում էր պետական սեփականություն: Հողերի սեփականաշնորհումը սկսվեց 1991թ. երբ կառավարությունը որոշ պետական հողեր վերաբաշխեց տնային տնտեսություններին: Սեփականաշնորհման գործընթացում, հողային սեփականությունը շնորհվում էր տնային տնտեսություններին: Լրացուցիչ բարեփոխումներ տեղի ունեցան 2009 և 2010թթ, երբ պետական խոշոր հողակտորների վերահսկողությունը փոխանցվեց համայնքներին, որի նպատակը տնտեսական զարգացմանը նպաստելն էր: Այս բարեփոխումը հնարավորություն տվեց համայնքներին վարձակալությամբ հանձնել պետական հողերը և պահել վարձակալության վճարները համայնքում:

Ուսումնասիրվող տարածքում հողերի մեծամասնությունը սահմանվում է որպես պետական հող, թեև դա հիմնականում պայմանավորված է Գորայք համայնքում պետական հողերի մեծ մասնաբաժնով: Սարավան և Գնդեվազ համայնքներն ավելի քիչ հող ունեն ու իրենց վարչական սահմաններում գտնվող հողը հիմնականում համայնքային է: Աղյուսակ 4.16.1-ում ներկայացվում է 90-ականների հողի սեփականաշնորհման գործընթացի ազդեցությունը, երբ յուրաքանչյուր տնային տնտեսություն ստացավ երկուական հեկտար հողատարածք:

Աղյուսակ 4.16.1. Հողի կարգավիճակը								
Հողի կարգավիճակը	Գորայք (հա)	%	Սարավան (հա)	%	Գնդեվազ (հա)	%	Ջերմուկ (հա)	%
Համայնքային հողեր	5,089.8	23.2	5,546.5	71.2	3,548.4	57.6	3,389.0	24.6
Պետական հողեր	14,927.2	67.9	1,776.4	22.8	2,028.8	32.9	9,422.1	68.5
Սեփականության իրավունքով պատկանող հողեր	10.9	< 1	0.1	< 1	-	-	-	-
Ռեզիդենտ/բնակելի հողեր	1,951	8.9	465.4	6.0	583.4	9.5	948.4	6.9
Ընդամենը	21,978.9	100	7,788.4	100	6,160.5	100	13,760	100

Ուսումնասիրվող տարածքում հիմնական հողօգտագործողները վարձակալական հիմունքներով են հողն օգտագործում, ամեն տարի վարձակալական պայմանագրի կնքման պայմանով: Խոտհարքների և արոտավայրերի վարձակալության պայմանագրերը կարծես կապ ունեն աշխարհագրական տարածքների հետ, քանի որ վարձակալը մուտք է գործում ավելի լայն տարածքներ արածեցման սեզոնի ընթացքում: Հողի ռենտաները սովորաբար ավելի երկար ժամկետներով են կնքվում (3, 5, 10 կամ 25 տարի): Ուսումնասիրվող տարածքում որոշվել են հետևյալ գյուղական հողօգտագործողների խմբերը՝

- **Մասնավոր հողի սեփականատերեր** - Ուսումնասիրվող տարածքում գոյություն ունեն փոքր թվով մասնավոր հողակտորներ,
- **Համայնքային վարձակալներ** - Տեղացիները գյուղատնտեսական նպատակով հող են վարձակալում համայնքից, որը ներառում է գյուղերում տներին մոտ հողերի վարձակալությունը, ինչպես նաև գյուղերից հեռու գտնվող արոտավայրերի վարձակալությունը: Այս հողի համաձայնագրերը վերահսկվում են ինչպես համայնքի ղեկավարության, այնպես էլ՝ մարզային պաշտոնյաների կեղմից:
- **Հողի մշտական օգտագործողներ** – Տեղացիներ, ովքեր օգտագործում են հողային ֆոնդը, սակայն չեն վճարում դրա համար: Թեպետ այս երևույթը պաշտոնական բնույթ չի կրում, սակայն այս պրակտիկան շարունակվում է համայնքի ղեկավարության գիտությամբ: Պահուստային հողերը որոշ տարածքներում խոցելի խմբերի օգտագործման համար հասանելի են, և Սարավանի բնակիչների համար ըստ երևույթին այս կատեգորիայում առկա են հասանելի հողեր:
- **Ժամանակավոր վարձակալներ** - այլ քաղաքային և գյուղական համայնքների բնակիչներ, ովքեր ուսումնասիրվող տարածքում հողամասեր են վարձակալում: Այս խմբի մեջ են մտնում սեզոնային նախրապանները, ովքեր կարող են ունենալ կամ չունենալ վարձակալության պաշտոնական պայմանագրեր, այսինքն որոշ նախրապաններ կատարում են միանվագ վճարումներ՝ սահմանված բաժնով:
- **Հողի ժամանակավոր օգտագործողներ**- այլ քաղաքային և գյուղական համայնքների բնակիչներ, ովքեր ուսումնասիրվող տարածքում հողակտորներ են օգտագործում սակայն վարձակալական վճար չեն վճարում: Օգտագործողների այս խումբը տեղացիների շրջանում հայտնի է որպես «ապօրինի հովիվներ»: Սակայն համարվում է, որ այս հովիվները հողի նկատմամբ ունեն սովորույթների վրա հիմնված իրավունք:

#### 4.16.2 Հողի դասակարգում

Հայաստանում հողի կադաստրը բոլոր հողերը դասակարգում է ըստ նպատակային նշանակության, որոնք ներառում են՝

- Բնակավայրերի հողեր
- գյուղատնտեսական,
- արտադրական,
- ընդերքօգտագործման (օգտակար հանածոներ) և արդյունաբերություն
- էներգետիկա,
- տրանսպորտ,
- կապ,
- պետական ենթակառուցվածքներ,
- հատուկ պահպանվող տարածքներ,
- հատուկ նշանակության,
- անտառտնտեսության
- ջրային ռեսուրսներ, և
- պահուստային հողեր.

Ուսումնասիրվող տարածքի գյուղական համայնքների վարչական սահմաններում հողի մեծամասնությունը դասակարգվում է որպես գյուղատնտեսական նշանակության (Աղյուսակ 4.16.2): Որպես քաղաքային համայնք, Ջերմուկն ունի հողի դասակարգման այլ պրոֆիլ, որը տարբերվում է գյուղական համայնքների հողի դասակարգումից:

Աղյուսակ 4.16.2. Հողի կատեգորիա								
Հողի կատեգորիա	Գորայք		Գնդելագ		Սարավան		Ջերմուկ	
	հա	%	հա	%	հա	%	հա	%
Գյուղատնտեսական հողեր	19521.99	88.82	5,727.0	92.96	6,402.3	82.2	4,734.7	34.4
Էլեկտրաէներգիա, հաղորդակցություն, տրանսպորտ և կոմունալ ենթակառուցվածքների և այլ հողեր	25.95	0.12	23.4	0.38	25.9	0.3	162.0	1.2
Անտառային	-	-	29.2	0.47	274.8	3.5	4,072.9	29.6

Աղյուսակ 4.16.2. Հողի կատեգորիա								
Հողի հողեր	Գորայք		Գնդեվազ		Սարավան		Ջերմուկ	
	ha	%	ha	%	ha	%	ha	%
Արդյունաբերական, հանքարդյունաբերության և այլ արդյունաբերական օբյեկտների հողեր	1659.64	7.55	336.2	5.46	1,012.3	13.0	112.3	0.8
Ջրաբանական և հիդրոտեխնիկական օբյեկտների հողեր	750.90	3.42	21.5	0.35	43.1	0.6	181.7	1.3
Բնակավայրերի հողեր	12.26	0.06	16.6	0.27	17.0	0.2	148.9	1.1
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	8.10	0.04	6.5	0.11	13.1	0.2	4,347.0	31.6
Ընդամենը (հա)	21,978.9	100	6,160.5	100	7,788.4	100.0	13,759.5	100.0

Աղյուսակ 4.16.3. Հողի կատեգորիա (կլորացրած մինչև 5 հա)								
Հողի կատեգորիա	Գորայք		Գնդեվազ		Սարավան		Ջերմուկ	
	ha	%	ha	%	ha	%	ha	%
Գյուղանտնտեսական հողեր	19521.99	88.82	5,727.0	92.96	6,402.3	82.2	4,734.7	34.4
Էլեկտրաէներգիա, հաղորդակցություն, տրանսպորտ և կոմունալ ենթակառուցվածքների և այլ հողեր	25.95	0.12	23.4	0.38	25.9	0.3	162.0	1.2
Անտառային հողեր	-	-	29.2	0.47	274.8	3.5	4,072.9	29.6
Արդյունաբերական, հանքարդյունաբերության և այլ արդյունաբերական օբյեկտների հողեր	1659.64	7.55	336.2	5.46	1,012.3	13.0	112.3	0.8
Ջրաբանական և հիդրոտեխնիկական օբյեկտների հողեր	750.90	3.42	21.5	0.35	43.1	0.6	181.7	1.3



Բնակավայրերի հողեր	12.26	0.06	16.6	0.27	17.0	0.2	148.9	1.1
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	8.10	0.04	6.5	0.11	13.1	0.2	4,347.0	31.6
Ընդամենը (հա)	21,978.9	100	6,160.5	100	7,788.4	100.0	13,759.5	100.0

Այնուհետև Հայաստանի կադաստրը գյուղատնտեսական հողերի կատեգորիաները բաժանել է՝ վարելահողեր, խոտհարքներ, գյուղատնտեսական նշանակության այլ հողեր և արոտավայրեր: Ուսումնասիրվող տարածքը գլխավորապես դասակարգվում է որպես արոտավայր (Աղյուսակ 4.16.3):

<b>Աղյուսակ 4.16.4. Վարչական հողերում պետության կողմից սահմանված գյուղատնտեսական հողերի դասակարգումը</b>								
Հողատեսք	Գնդելագ		Գորայք		Սարավան		Ջերմուկ	
	հա	%	հա	%	հա	%	հա	%
Վարելահողեր	461.2	8.4	1727.8	8.9	381.8	6.0	624.4	9.3
Խոտհարքներ	115.6	2.1	858.4	4.4	402.6	6.3	535.1	7.9
Բազմամյա բույսեր	-	-	-	-	-	-	-	-
Այլ գյուղատնտեսական նշանակության հողեր	421.9	7.7	3324.8	17.1	1249.3	19.7	1249.3	18.6
Արոտավայրեր	4501.1	81.8	13477.8	69.5	4323.2	68.0	4323.2	64.2
<b>Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր</b>	<b>5499.7</b>	<b>100.0</b>	<b>19388.8</b>	<b>100.0</b>	<b>6356.9</b>	<b>100.0</b>	<b>6732.0</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 4.16.5. Վարչական հողերում պետության կողմից սահմանված գյուղատնտեսական հողերի դասակարգումը</b>								
Հողատեսք	Գնդելագ		Գորայք		Սարավան		Ջերմուկ	
	հա	%	հա	%	հա	%	հա	%
Վարելահողեր	461.2	8.4	1727.8	8.9	381.8	6.0	624.4	9.3
Խոտհարքներ	115.6	2.1	858.4	4.4	402.6	6.3	535.1	7.9
Բազմամյա բույսեր	-	-	-	-	-	-	-	-
Այլ գյուղատնտեսական նշանակության հողեր	421.9	7.7	3324.8	17.1	1249.3	19.7	1249.3	18.6
Արոտավայրեր	4501.1	81.8	13477.8	69.5	4323.2	68.0	4323.2	64.2
<b>Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր</b>	<b>5499.7</b>	<b>100.0</b>	<b>19388.8</b>	<b>100.0</b>	<b>6356.9</b>	<b>100.0</b>	<b>6732.0</b>	<b>100.0</b>


Հողի կատեգորիան փոխելու համար անհրաժեշտ է Կառավարության, այդ թվում՝ տարածքային կառավարման և բնապահպանության նախարարությունների

հավանությունը: Հողի ենթակատեգորիան փոխելու համար (օրինակ՝ խոտհարքը արոտավայրի փոխելու) կառավարության հավանությունը չի պահանջվում:

2013 թվականի հունիսին Լիդիան ընկերությունն ավարտեց լիցենզիոն տարածքում վարչական հողերի դասակարգման ստուգման հարցումները: Այս հարցման նպատակն էր հաստատել, որ կադաստրային գրանցումներում նշված՝ հողի օգտագործման կատեգորիաները համապատասխանում էին իրական կատեգորիաներին:

Ուսումնասիրություններն ապացուցեցին, որ հողի դասակարգման իշխող մեծամասնությունը ճշգրիտ էր: Հողի դասակարգումն, ըստ կադաստրի, ներկայացված է Նկ. 4.16.2-ից մինչև Նկ. 4.16.5 ներառյալ՝ ներառելով Լիդիանի ստուգման հարցումների արդյունքում փոքր փոփոխություններ: Գորայքում և Ջերմուկում տեղի իշխանությունների հետ խորհրդատվություններն հաստատեցին կադաստրի դասակարգումների ճշտությունը: Սարավանում մի քանի հողատարածքներ այլ նպատակով էին օգտագործվում, քան նշված էր կադաստրում:





Նկ. 4.16.2. Հողօգտագործումը ուսումնասիրվող տարածքում

### **4.16.3 Գյուղական հողերի օգտագործում**

Ուսումնասիրվող տարածքում հողը հիմնականում օգտագործվում է անասունների արածեցման նպատակով: Քանի որ այս գործունեությունն իրականացվում է անընդհատ տեղափոխման պայմաններում, խիստ դժվար է սահմանել վարձակալական պայմանագրի և աշխարհագրական սահմանների տարանջատումը: Արբանյակային պատկերների օգտագործմամբ ուսումնասիրվող տարածքում իրականացվել է հողօգտագործման վիզուալ գնահատում: Ըստ այդ գնահատման տվյալների ուսումնասիրվող տարածքի գրեթե 68% կազմում են խոտհարքներ և միայն 9%-ն են դասակարգվում որպես գյուղատնտեսական նշանակության հողեր (տես Աղյուսակ 4.7.7): Վիզուալ գնահատման դեպքում խիստ դժվար է տարբերակել խոտհարքները արոտավայրից, ինչի արդյունքում հավանականություն կա, որ որպես խոտհարք սահմանված հողերի մի զգալի մաս օգտագործվում է նաև որպես արոտավայր: Արոտավայրից խոտհարք անցումը բավականին սահուն է: Տեղական եղանակային պայմանները թելադրում են հնձել չորացած խոտը:

Ուսումնասիրվող տարածքի գյուղական համայնքների հողերում անասունների արածեցումը ամառային ամիսներին ամենաշատ տեսանելի գործողություններից մեկն է: Արածեցմամբ զբաղվում են տեղական և Հայաստանի այլ հատվածներից եկած սեզոնային հովիվները: Սովորաբար տեղական հովիվները յուրաքանչյուր օրվա վերջում վերադառնում են գյուղական համայնքների իրենց տները, իսկ սեզոնային հովիվները ժամանակավորապես բնակություն են հաստատում գյուղական լանդշաֆտի լքված շենքերում, ավտոտնակներում, վրաններում կամ ավտոբուսներում: Հովիվների գտնվելու վայրերն ու նրանց կողմից օգտագործվող արոտավայրերի տեղադիրքը (արձանագրվել է 2012թ. կատարված երկու առանձին հետազոտությունների արդյունքում, ինչպես նկարագրվում է 4.11 Բաժնում) պատկերված են Նկ. 4.16.7-ում: Բացի այդ, հովիվների ժամանակավոր ճամբարների՝ սեզոնային հովիվների մի խումբ օգտագործում է լքված Ուղեձոր գյուղը ամառային ամիսներին գյուղի մոտակայքում իրենց անասուններին արածեցնելու նպատակով:

2012թ. սեպտեմբերին իրականացված մարդահամարի արդյունքներով ուսումնասիրվող տարածքում սեզոնային հովիվների թիվը կազմել 58 մարդ (տես Հավելված 4.16.1): Ծրագրի լիցենզիոն տարածքում հովիվների թիվը զգալիորեն ավելի փոքր է (մոտավորապես 20 հովիվ, որոնց մեծ մասը Խնձորեսկ գյուղից են): Ուսումնասիրման տարածքում հովիվների անցկացրած ժամանակահատվածը տարբեր տարիներին տարբեր է և վերահսկվում է արոտավայրի վրա ձյան գալով: Սեզոնային հովիվների մեծամասնությունը գտնվում են


ուսումնասիրվող տարածքում հունիսց մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում:  
Ուղեծորի մերձակայքում արածեցումը շարունակվում է մինչև ուշ հոկտեմբեր կամ վաղ նոյեմբեր:

Գյուղական համայնքների ղեկավարները հավատացած են, որ արոտավայրերը գերօգտագործվում են, քանի որ արածեցվող անասունների գլխաքանակը մեծանում է: 2012թ. ՈւԱԻ ընկերության կողմից իրականացրած հովիվների դաշտային հետազոտությունների արդյունքների համաձայն՝ Գորայքի վարչական սահմաններում ամենալավ արոտավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 2200-2350մ բարձրության վրա, մինչդեռ անասունների արածեցման համար պիտանի արոտավայրը գտնվում է 2500մ ծովի մակերևույթից բարձրության վրա (տես Հավելված 4.16.1):

Գորայք և Մարավան համայնքներում ամառային ամիսների ընթացքում հողօգտագործման ձևերից գերակշռում է անասունների արածեցումը, սակայն նույնը չի կարելի ասել Գնդեվազի մասին, որտեղ գերակշռում է ծիրանի մշակումը:

2011թ. ղեկտեմբերին իրականացված էթնոբուսաբանական հետազոտության արդյունքում հայտնաբերվել են հողի հետ կապված գործունեության այլ տեսակները, որոնց թվում են՝

- սնկի, ուրցի, դաղձի, մասուրի, հատապտուղների և դեղաբույսերի հավաքում ուսումնասիրվող տարածքի բոլոր հասանելի խոտհարքներում, արոտավայրերում և անտառածածկ տարածքներում (Էկոհամակարգերի ծառայությունների վրա ազդեցությունների վերլուծությունը տես Գլուխ 6.20-ում):
- անտառածածկ տարածքներից չոր փայտի հավաքում, մասնավորապես, Մարավանում, որպես գազի և էլեկտրական կենտրոնացված ջեռուցման համակարգերի փոխարինող կամ լրացնող, ինչպես նաև որպես վառելափայտի օգտագործում
- Որսորդություն և ձկնորսություն, որոնք ավանդական զբաղմունքներ են, որոնցով զբաղվում են ուսումնասիրվող տարածքի անտառածածկ տարածքներում և գետերում ու վտակներում, և
- Ուսումնասիրվող տարածքի անտառածածկ տարածքներում հետիոտնային արահետներով զբոսանքներ, որոնք մեծ ժողովրդականություն են վայելում զբոսաշրջիկների և այցելուների շրջանում:



Նկ. 4.16.3. Մակերի և խոտաբույսերի հավաքման վայրեր